«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/127

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2025 թ.N 127

«ԼՈՌՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Հերացու 11**

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը՝ **պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով, 02 հունիսի 2021 թ. N 50**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի ապրիլի 18-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԼՏՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 31 հունվարի 2024թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 02 հունիսի 2024թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 18-20-ը նոյեմբերի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 03 մարտի 2025 թ.

թերությունների վերացման նախնական

ծրագրի ներկայացում՝ 28 փետրվարի 2025թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Լիլիթ Աբելյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատու, դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
- **Օլեգ Գևորգյան՝** ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի անդամ,
- **Սուսաննա Պիչիկյան՝** Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
- **Արտակ Խաչատրյան՝** Հայաստանի եվրոպական համալսարանի ուսանող, փորձագիտական խմբի անդամ՝ ուսանող-փորձագետ։

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ;
Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով։ Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***ՄՈՒՀ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում։***

Քոլեջը ձևավորել է համապատասխան հիմքեր՝ իր առաքելությանը և տարածաշրջանի կարիքների պահանջներին համապատասխան կրթական ծրագրեր իրականացնելու համար։ Դուալ կրթության ներդրումը, աշխատաշուկայի արձագանքների մշտադիտարկումը և մարդկային ռեսուրսների ներուժը կարևոր նախապայմաններ են արդյունավետ կրթական միջավայրի ապահովման համար։ Միևնույն ժամանակ, առկա են մի շարք ուղղություններ, որոնք պահանջում են բարելավում։ Մասնավորապես, անհրաժեշտ է մշտադիտարկել այն ՄԿԾ-ները, որոնցում դիմորդների բացակայությունը վկայում է դրանց վերանայման անհրաժեշտության մասին։ Կրթական ծրագրերի արդիականացման նպատակով

խորհուրդ է տրվում իրականացնել համեմատական վերլուծություն (բենչմարքինգ)՝ համագործակցելով տեղական և միջազգային գործընկերների հետ: Ուսանողների հմտությունների շարունակական զարգացման ապահովման համար նպատակահարմար է ներդնել գործնական հմտությունների գնահատման համապատասխան գործիքակազմ, ինչպես նաև ձևավորել կրթական ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմներ՝ հիմնված շահակիցների արձագանքների, ամփոփիչ ատեստավորման արդյունքների և շրջանավարտների հետագծի վերլուծության վրա: Մարդկային ռեսուրսների զարգացման համատեքստում կարևոր է պարբերաբար գնահատել դասախոսների վերապատրաստման կարիքները և համապատասխան միջոցներ հատկացնել՝ նրանց մասնագիտական զարգացմանը նպաստելու նպատակով: Տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով անհրաժեշտ է արդիականացնել համակարգչային տեխնիկան և ներդնել նորարարական ծրագրեր՝ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումն ապահովելու համար:

2. Հանձնաժողովն արձանագրում է, որ ռազմավարական կառավարման և որակի ապահովման համակարգերը քոլեջում ձևավորման փուլում են:

Քոլեջում ռազմավարական կառավարումը ներկայումս պահանջում է համակարգային ամրապնդում՝ հիմնված հստակ ձևակերպված, չափելի ցուցանիշների և տվյալահենք որոշումների վրա: Ռազմավարական նպատակների իրականացումը ենթադրում է արդյունահենք գնահատման մշակույթի ձևավորում, որի շրջանակում անհրաժեշտ է մշակել գնահատման համապատասխան գործիքակազմ՝ հստակեցնելով առանցքային արդյունքները, դրանց չափման մեթոդներն ու սահմանային շեմերը: Նշված գործիքակազմը պետք է դառնա կառավարման և շարունակական բարելավման գործընթացների բաղկացուցիչ մաս՝ ապահովելով համակարգային վերլուծություն և հիմնավորված որոշումների կայացում: Բացի այդ, անհրաժեշտ է մշակել տվյալների շրջանառության պարբերական ընթացակարգեր՝ ապահովելու, որ հավաքագրված տեղեկատվությունը ոչ միայն պահպանվի, այլ նաև նպատակային վերլուծվի և կիրառվի ռազմավարական պլանավորման, որոշումների կայացման, ինչպես նաև կատարողականի գնահատման գործընթացներում: Որակի ապահովման համակարգը պետք է գործի որպես ինստիտուցիոնալ անկախ միավոր՝ օժտված վերլուծական և ռազմավարական գործառույթներով: ՈԱ համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է ապահովել դրա լիարժեք ընդգրկվածությունը կառավարման բոլոր մակարդակներում՝ ներառյալ ռազմավարական, կրթական և աջակցող գործընթացները:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:

Միջազգայնացման ուղղությամբ քոլեջն արձանագրել է որոշակի առաջընթաց՝ ընդգրկվելով միջազգային ծրագրերում և ձևավորելով նոր գործընկերային կապեր: Անհրաժեշտ է շարունակել գործող համագործակցությունները՝ ընդլայնելով ուսանողների և դասախոսների շարժունության հնարավորությունները: Միևնույն ժամանակ, նպատակահարմար է մշակել միջազգայնացման զարգացման պլան՝ ներառելով միջազգային փորձի տեղայնացման, բենչմարքինգի իրականացման և շարժունության ապահովման համար հստակ քայլեր: Քոլեջում հետազոտական գործունեությունը որոշակի մակարդակով իրականացվում է, սակայն այն դեռևս ռազմավարական առաջնահերթություն չի համարվում: Խորհուրդ է տրվում հստակեցնել հետազոտական ուղղությունները, սահմանել հետազոտության գնահատման չափանիշներ և ներդնել մեխանիզմներ, որոնք կխթանեն դասախոսների ներգրավվածությունը հետազոտական գործընթացներում: Պետք է ամրապնդել ուսումնառության և հետազոտության միջև կապը՝ հատկապես կիրառական և գործնական նախագծերի մակարդակում՝ նպաստելով ուսանողների հետազոտական մտածողության զարգացմանը:

4. Հավատարմագրման հանձնաժողովը պարտավորեցնում է ԼՏՊՔ-ին վերանայել թերությունների վերացման ծրագրը: Անհրաժեշտ է ծրագրում ներառել փորձագիտական խմբի կողմից նշված բոլոր խորհրդատվությունների իրականացման պլանավորումը: Ծրագիրը պետք է կազմվի հիմնավորված և իրատեսական ձևաչափով՝ ներառելով կոնկրետ գործողություններ, հստակ ժամկետներ, պատասխանատուներ և համապատասխան ռեսուրսներ: Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ--ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., ապրիլի 18